



Tempus Armenia

TEMPUS ԾՐԱԳՐԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԳՐԱՄԵԼՅԱԿ

ԿԱՐԱԲԵԿՅԱՆ Ս.Բ.
ՔՈՉԱՐՅԱՆ Հ.Մ.

ԻՆՉՊԵՍ
ՊԱՏՐԱՍՏԵԼ
ԵՎ ԻՐԱԿԱՆԱՅՆԵԼ
ՈՒՍԱՆՈՂԱՄԵՏ
ԴԱՍԸՆԹԱՅ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ
ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Երևան 2011



Tempus Armenia

ԿԱՐԱԲԵԿՅԱՆ Ս.Բ., ԶՈՉԱՐՅԱՆ Հ.Ս.

**ԻՆՉՊԵՍ ՊԱՏՐԱՍՏԵԼ
ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ
ՈՒՍԱՆՈՂԱՄԵՏ ԴԱՍԸՆԹԱՅ**

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Երևան
2011

ՀՏԴ 378 (072)
ԳՄՊ 74.58
Կ-290

Հրատարակվել է ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ և TEMPUS ծրագրի Բարձրագույն կրթության բարեփոխումների փորձագետների խմբի երաշխավորությամբ
Տպագրվել է TEMPUS ծրագրի Հայաստանյան գրասենյակի ֆինանսական աջակցությամբ



European Commission

TEMPUS

This project has been funded with support from the European Commission. This publication reflects the views only of the authors, and the Commission cannot be held responsible for any use which may be made of the information contained therein.

Այս նախագիծը ֆինանսավորվել է Եվրոպական Հանձնաժողովի աջակցությամբ: Սույն հրատարակությունը արտացոլում է միայն հեղինակների տեսակետները, և Հանձնաժողովը չի կրում որևէ պատասխանատվություն դրանում պարունակվող տեղեկատվության ցանկացած օգտագործման համար:

Կ-290 Կարաբեկյան Ս.Բ., Ինչպես պատրաստել և իրականացնել ուսանողամետ դասընթաց: Մեթոդական ուղեկիշներ դասախոսների համար / Ս.Բ.Կարաբեկյան, Յ.Մ.Քոչարյան - Եր., 2011թ. - 44 էջ:

Ուղեցույցում նկարագրվում են ուսանողամետ (դեպի ուսանողների կրթական կարիքների բավարարումը շրջված) դասընթացի ուսումնական փաթեթի նախագծման և մշակման մեթոդաբանական մոտեցումները, այն վարելու հիմնական առանձնահատկությունները: Ներկայացվում է ուսանողամետ դասընթացի ուսումնական փաթեթի բաղկացուցիչ տարրերի բովանդակությունը: Տրվում է նաև ուսանողամետ դասընթացի մեկ օրինակ:

Հասցեագրված է դասախոսներին, ասպիրանտներին և ուսանողներին, ինչպես նաև բարձրագույն կրթության բարեփոխումների գործընթացներում ներգրավված մասնագետներին:

ՀՏԴ 378 (072)

ԳՄՊ 74.58

ISBN 978-99941-2-544-9

© Ս.Բ.Կարաբեկյան, Յ.Մ.Քոչարյան, 2011

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
Ուսանողամետ կրթություն. հիմնական բնութագրերը	4
Ա. ՈՒՍԱՆՈՂԱՄԵՏ ԴԱՍԸՆԹԱՑ ՄՇԱԿԵԼՈՒ ԶԻՄԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ	8
Դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների պլանավորումը ուսանողամետ դասընթացի ծրագրում	8
Դասընթացի նպատակի ձևակերպումը	10
Ուսանողամետ դասընթացի պլանավորման գործընթացը	12
Բ. ՈՒՍԱՆՈՂԱՄԵՏ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳՐԻ ԿԱԶՄՈՒՄԸ	16
Գ. «ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԼՈԲԱԼԻԶԱՑԻԱ. ԱՐԵՎՄՈՒՏՔ ԵՎ ԻՍԼԱՄ» ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳՐԻ ՆՄՈՒՇՕՐԻՆԱԿ	22
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	43

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ուսանողամետ կրթություն. հիմնական բնութագրերը

Բարեփոխումների ընթացքը բարձրագույն կրթության համակարգում բազմաբևեռ գործընթաց է, որն առնչվում է այսպես կոչված շահեկիցներին՝ բարձրագույն կրթության խնդիրներում շահագրգռված բազմաթիվ խմբերին. դրանցից թերևս առավել մեծ դերակատարություն ունեն կրթական գործընթացում անմիջականորեն ներգրավված կողմերը՝ ուսանողները և դասախոսական կազմը:

Դժվար է պատկերացնել, որ առանց դասախոսական կազմի անմիջական մասնակցության և շահագրգռվածության բարեփոխումների ընթացքը կարող է հաջողությամբ պսակվել: Սակայն բարեփոխումների ընթացքի թերևս ամենակարևոր շահեկիցն առաջին հերթին ուսանողությունն է՝ կրթական գործընթացի այն մասնակիցը, որը և հանդիսանում է իր կրթության հիմնական պատվիրատուն:

Բարձրագույն կրթության հայեցակարգը ժամանակակից աշխարհում ելնում է այն սկզբունքից, որ կրթությունն այժմ ոչ միայն հասարակական, ազգային արժեք է, այլ նաև անհատի կրթական պահանջմունքների բավարարման ասպարեզ: Նորացված հայեցակարգը նախատեսում է կրթության անհատականացված բնույթ, որը թույլ է տալիս հաշվի առնել յուրաքանչյուր կոնկրետ մարդու հնարավորությունները և նպաստել վերջինիս ինքնաիրացմանն ու զարգացմանը: Դա կարող է իրականություն դառնալ սովորողների և դասավանդողների տարբեր անհատական հնարավորությունները հաշվի առնող տարաբնույթ կրթական ծրագրեր մշակելու միջոցով:

Այդ իսկ պատճառով բարեփոխումների գործընթացի ժամանակակից փուլում առավել կարևորվում է ուսանողների դերակատարությունը, և բարձրագույն կրթությունն աշխարհում այժմ գտնվում է այսպես կոչված «դասախոսակենտրոն» մոդելից դեպի «ուսանողակենտրոն», կամ «ուսանողամետ» մոդել անցման ժամանակաշրջանում:

Որո՞նք են ավանդական՝ «դասախոսակենտրոն» մոդելի հիմնական բնութագրական գծերը: Ընդհանուր առմամբ, կարելի է առանձնացնել կրթության այս մոդելին հատուկ հետևյալ կողմերը.

1. Դասախոսը կրթական գործընթացի գլխավոր և, ըստ էության, միակ սուբյեկտն է, նա՛ է սահմանում ուսումնառության ընթացքը, որոշում վերջինիս կառուցվածքը, տեմպը, փոխանցվող ուսումնական ինֆորմացիայի չափն ու ծավալները, ինչպես նաև հսկում ուսանողների մատչումը դեպի տեղեկատվություն՝ նորմավորելով դրա քանակը և մակարդակը:
2. Գիտելիքի փոխանցումն այս մոդելում դիտարկվում է որպես մեկ ուղղությամբ ընթացող գործողություն՝ ուսանողները դիտարկվում են որպես յուրօրինակ «դատարկ անոթներ», իսկ ուսուցումը՝ սոսկ իբրև այդ «անոթները» սահմանված չափով ուսումնական ինֆորմացիայով «լցնելու» գործողություն: Ուսանողը դրանով իսկ հանդես է գալիս ընդամենը իբրև դասավանդման պրոցեսի օբյեկտ:
3. Հասկանալի է, որ այս պարագայում դասավանդումը, ինչպես նաև փոխանցված ուսումնական ինֆորմացիայի որակի ստուգումը (քննությունների և ստուգարքների, ստուգողական աշխատանքների կամ ռեֆերատների տեսքով) կողմնորոշված է դեպի այդ «միջին» չափը, համապատասխանաբար, ուսանողի առաջադիմելու ձգտումը պայմանավորվում է այդ իսկ սահմանված չափով:

Այս մոդելում կրթական գործընթացը առավելապես ընկալվում է իբրև *դասավանդում*, որպես գիտելիքի փոխանցում, բայց ոչ նաև իբրև *ուսումնառություն*, կամ գիտելիքի յուրացում: Կրթության որակն էլ, համապատասխանաբար, կարող է դիտարկվել միայն որպես դասավանդման որակ, հետևապես՝ ուսումնառության որակը դառնում է դասավանդման, այն է՝ գիտելիքի փոխանցման որակի արդյունք, ուստի կրթական վերջնարդյունքները գնահատելիս իրականում գնահատվում է ոչ թե գիտելիքի յուրացման, այլ գիտելիքի փոխանցման որակը, հետևապես՝ կրթական պրոցեսի որակը լիակատար կերպով չի չափվում:

Սյուս կողմից՝ պետք է նկատել, որ այդ պարագայում իրականում չի չափվում նաև դասավանդման որակը, քանի որ դրա գնահատումն իրականանում է միջնորդավորված կերպով՝ դրա արդյունքում ուսանողների դրսևորած գիտելիքների միջոցով: Եվ վերջապես, հասկանալի է, որ այդ ամենի արդյունքում ուսանողները իրականում գրկված են լինում մատուցվող կրթական ինֆորմացիայի որակի վրա ներազդելու հնարավորությունից:

Ուսանողամետ մոդելին անցնելու անհրաժեշտությունն, ինչպես նշվել է, պայմանավորված է այն հանգամանքով, որ կրթության պատվիրատու այլևս հանդիսանում է ոչ միայն պետությունը, կամ հասարակությունը, այլ նաև ինքը՝ ուսանողը, ով դրանով իսկ բավարարում է իր՝ բարձրորակ կրթություն ստանալու պահանջունքը, որն էլ, իր հերթին, պայմանավորված է ուսանողի՝ գիտահենք հասարակությունում առավել նպաստավոր դիրք զբաղեցնելու բնական նպատակադրությամբ: Հասկանալի է, որ հանդես գալով որպես պատվիրատու, ուսանողը չի կարող չըստանձնել դրան համապատասխանող նոր՝ առավել ակտիվ դեր կրթական գործընթացում, այն է՝ կրթության գործընթացի լիիրավ սուբյեկտ հանդիսանալ: Նման դիրք գրավելն, իհարկե, ամենևին էլ չի նշանակում, որ այժմ արդեն հենց ուսանողն է դառնում կրթական գործընթացի միակ սուբյեկտը, ինչպիսին հանդիսացել է դասախոսը ավանդական՝ «դասախոսակենտրոն» մոդելում, այսինքն, անցումը դեպի «ուսանողամետ» մոդել չի ենթադրում կրթական գործընթացում առաջացած միաբևեռությունը դրա հակադիր տարբերակով փոխարինելը՝ խոսքն ընդամենը հավասարակշռված, երկբևեռ համակարգի ձևավորման մասին է, որում ուսանողն ու դասախոսը համագործակցում են գիտելիքի փոխանցման և ձեռք բերման փոխկապակցված գործընթացում:

Ուսումնառությունն այստեղ ընկալվում է որպես **անհատ ուսանողի ուսումնական գործունեություն՝ որն ուղղված է գիտելիքի յուրացմանը**: Դրանից բխում է նաև ուսումնառության եղանակների բազմազանության հնարավորությունը, որը պայմանավորված է ուսանողի անհատական յուրահատուկ կրթական նպատակներով: Դասախոսի դերի փոփոխությունն այս մոդելում

պայմանավորված է հիմնականում ուսանողների ուսումնական գործունեությունը առավելագույն կերպով խթանելու համար դասավանդումը կազմակերպելու մեջ: Պետք է հաշվի առնել, որ նման մոտեցման պարագայում ուսումնառության զգալի մասը կատարվում է լսարանից դուրս, հետևապես՝ ուսանողները ակտիվ ներգրավվում են իրենց իսկ ուսումնառության պլանավորման և կազմակերպման գործում և, համապատասխանաբար, պատասխանատվություն կրում այդ բանի համար:

Չասկանալի է, որ քննարկվող կոնցեպտուալ անցումները չեն կարող լինել սոսկ մեխանիկական փոփոխություններ և ներմուծվել կրթական պրակտիկա, այսպես ասած, գրչի մեկ հարվածով՝ վարչական որևէ որոշման հիման վրա: Դրանք պահանջում են **«ուսանողամետ» կրթական մշակույթի ձևավորում**: Այդ նպատակին հասնելու առաջնային հիմնական միջոցներից է դասընթացը պլանավորելու, մշակելու և վարելու նկատմամբ համապատասխան մոտեցումների ձևավորումը:

Ստորև ներկայացվում է այդպիսի մոտեցումների հիման վրա դասընթացի ուսումնական փաթեթ կազմելու համար մի ուղեցույց, որը, նախատեսված լինելով արևելագիտության ոլորտում կազմակերպվող կրթական դասընթացների համար, կարող է օգտակար մեթոդական ձեռնարկ հանդիսանալ նաև հումանիտար այլ մասնագիտությունների շրջանակներում իրականացվող դասընթացներ մշակելիս:

Ա. ՈՒՍԱՆՈՂԱՄԵՏ ԴԱՍԸՆԹԱՅ ՄՇԱԿԵԼՈՒ ՅԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների պլանավորումը ուսանողամետ դասընթացի ծրագրում

Այնպես է, որ դասընթացի հաջողված լինելը կախված է ոչ միայն դասախոսի կողմից մատուցվող նյութի որակից և արդիականությունից, այլ նաև դասընթացը ճիշտ կերպով պլանավորելու, նյութը դասընթացի վերջնարդյունքների տեսանկյունից ճշգրիտ բաշխելու և դասընթացի ընթացքում ուսանողների հետ համագործակցությունը կազմակերպելու եղանակներից: Այդ առումով հասկանալի է, որ որքան շատ տեղեկատվություն տրվի դասախոսի կողմից ուսանողներին դասընթացի նպատակի, ուսանողների պարտավորությունների և այն չափանիշների վերաբերյալ, որոնք նախատեսվում է կիրառել ձեռք բերված վերջնարդյունքները գնահատելու համար, այնքան ավելի հստակ կարտահայտվեն թե՛ դասախոսի, և թե՛ ուսանողների մասնագիտական ձեռքբերումները: Բնական է, որ դասընթացի այդպիսի կազմակերպումը դյուրին խնդիր չէ՝ այն մեծ ջանքեր է պահանջում դասախոսի կողմից, և հաճախ ավելի շատ աշխատանք, քան դա սովորաբար կատարվում էր անցյալում:

Առաջին քայլն այդ ուղղությամբ պետք է լինի ուսումնառության նպատակների, կամ կրթական վերջնարդյունքների հստակ ցանկի մշակումը թե՛ դասընթացի, և թե՛ վերջինիս յուրաքանչյուր բաղադրիչ միավորի համար: Այնուհետև անհրաժեշտ է համոզվել, որ ուսանողների առաջադիմությունը գնահատելու համար կիրառվող մեթոդները համապատասխանում են դասընթացի նախանշված նպատակներին: Բացի այդ, ուսանողները կարիք ունեն հասկանալու և ընկալելու այն չափանիշները, որոնք կիրառվելու են նրանց գնահատականները դնելու և առաջադրանքների կատարումը արժեվորելու համար: Այդ ամենը սահմանելուց հետո կարելի է ուսանողների ուշադրությունը տեղափոխել այն ուսումնական գործողությունների վրա, որոնք պիտի օգնեն

Նրանց հասնելու նպատակին:

Ավա՛ղ, շատ դեպքերում ուսանողները սկսում են դասընթացը առանց ունենալու այնպիսի ունակություններ և հմտություններ, որոնք անհրաժեշտ են արդյունավետորեն օգտագործելու համար անգամ ամենահարուստ և որակյալ ինֆորմացիան: Ուսանողներին այսօր պարզապես դասընթացի ծրագիր կամ ուսումնական ուղեցույց տրամադրելը բավական չէ: Շատ կարևոր է ներկայացնել ուսումնառության հայտարարված նպատակների կարևորությունը, ցույց տալ ուսանողներին, թե ինչպե՛ս են այդ վերջնարդյունքներն ուղղակիորեն կապակցված գնահատման եղանակների հետ:

Պետք է նկատի ունենալ նաև, որ սովորելու նոր հնարավորությունները Ինտերնետի միջոցով՝ ներառյալ կայքէջերը (ինչպես, օրինակ, MySpace կամ YouTube, Էլ.փոստը) կամ դասընթացի կառավարման համակարգերը (ինչպես, օրինակ՝ Blackboard, Webcampus, Moodle և այլն), թույլ են տալիս ուսումնական ինֆորմացիայի փոխանակում իրականացնել նաև պարբերական լսարանային հանդիպումներից դուրս: Դա, բնականաբար, անդրադառնում է տեղեկատվական դարաշրջանում գիտելիքի բնույթի վրա և պայմանավորում բազմաթիվ փոփոխություններ դասավանդման պրոցեսում:

Աշխարհը շարժվում է դեպի գիտելիքի վրա հենված տնտեսություն, ուստի տեղեկատվական գրագիտությունը դառնում է ուսանողներին հարատև կրթությանը նախապատրաստելու կարևորագույն բաղադրիչ՝ դա է պահանջում ներկայի և ապագայի աշխատաշուկան: Ուսանողներին այդ նպատակին նախապատրաստելը խիստ պահանջներ է ձևավորում դասընթացի ծրագրի, կառուցվածքի, նյութերի և ուսումնական ռազմավարությունների նկատմամբ:

Ուսանողամետ (դեպի ուսանողների կրթական կարիքների բավարարումը շրջված) դասընթացի ծրագիրը ընթերցելիս ուսանողները պետք է հստակ պարզեն, թե ի՞նչ է պահանջվում իրենցից դասընթացի նպատակին հասնելու համար, և թե ի՞նչ գործողություններ կարող են նպաստել նրանց առաջադիմությանը: Ուսա-

նողները բացի այդ տեղեկանում են, թե ի՞նչ հմտություններ պիտի զարգացնեն համապատասխան կարողություններ ձևավորելու համար: Այսպես, օրինակ, հռետորական հմտությունների զարգացումը անհրաժեշտ է բանավոր փաստարկներ արտահայտելու համար, միջանձնային հմտությունները անհրաժեշտ են փոքր խմբերում հաջողությամբ աշխատելու համար, համակարգչային ծրագրերից օգտվելու հմտությունները՝ ցուցադրության միջոցով հետազոտական նախագծի արդյունքները ներկայացնելու համար: Այդ ունակությունները, թեպետև առաջին հայացքից անմիջականորեն չեն առնչվում այս կամ այն կոնկրետ առարկայական ոլորտի դասընթացների մասնագիտական բովանդակությանը, սակայն անհրաժեշտ են ուսանելու գործընթացը հաջողությամբ իրականացնելու տեսանկյունից, ուստի դրանք նույնպես գիտելիք ձևավորող արդյունքներ են:

Ուսանողամետ դասընթացում թե՛ բովանդակությանը, և թե՛ սովորելու ընթացքին վերաբերող հմտությունները պետք է ներառվեն որպես կրթական վերջնարդյունքներ:

Ուստի՝ ուսանողամետ դասընթացի ծրագրի բաժինները ներկայացնում են ոչ միայն այն, ի՞նչ է անելու դասախոսը օժանդակելու համար ուսանողներին հասնելու դասընթացի նպատակներին, այլ նաև թե ի՞նչ պետք է անի ուսանողը դրան հասնելու համար:

Դասընթացի նպատակի ձևակերպումը

Դասընթացի ընդհանուր նպատակները նկարագրելիս ծրագրում ուշադրություն է սևեռվում այն ուսումնական միջավայրի վրա, որ մտադիր է ձևավորել դասախոսը: Այստեղ նախընտրելի է նկարագրել ուսումնական պրոցեսի իր ընկալումը, պարզաբանել այն, ինչը նա արժեվորում է դասավանդման և ուսումնառության պրոցեսներում և ներկայացնել, թե ինչպե՛ս ուսանողները պետք է մասնակցեն այդ գործընթացին: Ծրագիրը պետք է ցուցադրի ինչպես դասախոսի՝ առարկայական նյութին տիրապետելու վարպետությունը, այնպես էլ այդ նյութը ուսանողներին հասու դարձնելու հմտությունը:

Ուսանողամետ մոտեցումը դասախոսի առջև առաջ է քաշում ուսանողներին իրենց ուսումնառությունը ինքնակազմակերպելու համար պատասխանատվություն ստանձնելուն նպաստելու խնդիր: Ուսանողամետ դասընթացը պլանավորելիս ուստի անհրաժեշտ է հաշվարկել դասախոսի՝ դասընթացը վարելու և ուսանողի՝ իր ուսումնառությունը ինքնակազմակերպելու միջև համաչափությունը: Հաշվի առնելով դասընթացի մակարդակը (բակալավորիատ, մագիստրատուրա), ինչպես նաև դասընթացին մասնակցող ուսանողների նախնական հմտություններն ու գիտելիքները, անհրաժեշտ է ձգտել՝

- նպաստել դասընթացի շրջանակներում ուսանողների մոտ սեփական նպատակների ձևավորմանը.
- սովորեցնել պլանավորել այդ նպատակներին առնչվող խընդիրները.
- սովորեցնել հետևել սեփական առաջընթացին և իրատեսորեն գնահատել ձեռքբերումները:

Նպատակահարմար է պլանավորել նաև կրթական այլ գործողություններ, որոնք կդրդեն ուսանողներին դասընթացի ընթացքում ստանձնելու առավել մեծ պատասխանատվություն ուսումնառության գործընթացի նկատմամբ:

Դասընթացի յուրաքանչյուր ասպեկտ պետք է առավել արդյունավետորեն աջակցի ուսանողի սովորելուն: Այստեղից բխում է դասախոսի պատասխանատվությունը ուսանողներին օգնելու սովորել թե՛ բովանդակությունը (տիրապետել առարկայական գիտելիքի), և թե՛ գործընթացը (տիրապետել գիտելիք ձեռք բերելու հմտություններին): Իրողություն է, ցավոք, որ ուսանողները երբեմն բավարար չափով պատրաստված չեն լինում, երբ սկսում են հաճախել այս կամ այն դասընթացը, ուստի առավել անհրաժեշտ է ձևավորել այնպիսի ուսումնական միջավայր, որում ուսանողները հնարավորություն կունենան լրացնելու դասընթացի նպատակին հասնելու համար պահանջվող նախնական գիտելիքները:

Դասընթացի ծրագիրն այսպիսով դասախոսի և ուսանողների միջև փոխգործակցության կարևոր մի հանգրվան է՝ թե՛ լսարա-

նում և թե՛ լսարանից դուրս, և՛ առերես, և՛ առցանց: Ավանդական ծրագիրը առաջին հերթին տեղեկության աղբյուր է, որը բաժանվում է ուսանողներին և հաճախ, ինչպես հայտնի է, մի կողմ դրվում առաջին իսկ դասից հետո, մինչդեռ ուսանողամետ ծրագիրը կարող է լինել ուսումնառելու կարևոր գործիք, ձևավորելով՝

- (ա) խթանող համատեքստ՝ մենք սովորում ենք ավելի լավ այն, ինչն իմանալու կարիքն ունենք,
- (բ) սովորողի ակտիվություն՝ տեսական ուսումնառությունը և գործնական կիրառումը հանդես են գալիս զուգընթաց,
- (գ) համագործակցություն մյուսների հետ՝ համատեղ խմբային աշխատանքը լսարանում ձևավորում է ուսումնառության այնպիսի չափում, որը չի կարող ապահովվել լոկ դասախոսություններ ունկնդրելով և գրականություն ընթերցելով:

Ուսանողամետ դասընթացի պլանավորման գործընթացը

Ուսանողամետ դասընթաց ծրագրելիս պետք է նախևառաջ սահմանել, թե ի՞նչ հմտություններ, գիտելիքներ և մոտեցումներ են համարվում դասախոսի կողմից առավել արժեքավոր, ինչպե՛ս դրանք կարող են ձևավորվել դասընթացի ընթացքում և ինչպե՛ս դրանք կարող են պատշաճ կերպով գնահատվել: Ուստի անհրաժեշտ է կազմել մի ծրագիր, որը կիրազեկի ուսանողներին այդ ակնկալիքների ու մտադրությունների մասին:

Ընդհանուր առմամբ, գործընթացն ընդգրկում է երեք փուլ՝

- (ա) հիմնական և պարտադիր յուրացում պահանջող խնդիրների առանձնացում՝ այն, ինչ ուսանողները պետք է ձեռք բերեն դասընթացից,
- (բ) դրանց յուրացման աստիճանը արձանագրելու մեթոդների մշակում (գնահատման և արժեքավորման պրակտիկան՝ ֆորմալ և ոչ ֆորմալ),
- (գ) հետաքրքրություն, շահագրգռվածություն առաջացնող և հետևաբար, յուրացմանը հանգեցնող ուսումնական գործողությունների և դասավանդման մեթոդների որոշում:

Դասընթացը պետք է պլանավորվի նկատի ունենալով, թե՛ պրոցեսը, թե՛ բովանդակությունը, և թե՛ վերջնարդյունքները, քա-

նի որ բացի տեսական գիտելիքից և տեխնիկական հմտություններից, ուսանողները կարիք են ունենալու նաև գործիքների՝ հասարակության մեջ արդյունավետորեն ապրելու և աշխատելու համար, իսկ այդպիսի կոմպետենցիաների աստիճանական ձևավորումը պետք է տեղի ունենա կրթական ծրագիրը կազմող յուրաքանչյուր դասընթացի շրջանակներում: Հենց այստեղ է, որ ուսանողները սովորում են՝

- նախաձեռնել, ըմբռնել, գնահատել և ստանձնել պատասխանատվություն իրենց իսկ ուսումնառության ընթացքի համար,
- արդյունավետորեն գնահատել և օգտագործել ուսումնական ռեսուրսները,
- աշխատել առանձին և համագործակցել մյուսների հետ,
- որոշումներ կայացնել տարբեր իրավիճակներում առաջացող երկընտրանքների վերաբերյալ,
- ստեղծագործաբար մտածել և հաղորդակցվել՝ ինչպես, օրինակ, հստակ շարադրել մտքերը և ձևակերպել գաղափարները (այդ թվում, օգտագործելով թվային ցուցանիշներ, գրաֆիկներ, էլեկտրոնային տեխնոլոգիաներ), ընթերցված նյութերից անհրաժեշտ ինֆորմացիա քաղել, լսել այլոց կարծիքները և հարգալից ու ըմբռնող մոտեցում ցուցաբերել դրանց նկատմամբ, ընկալել և պատշաճ կերպով կատարել առաջադրանքները:

Ուսանողների պատասխանատվությունը ուսումնառության նկատմամբ բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է նրանց հաղորդել ինքնագնահատման հմտություններ: Դա անելու համար, կարելի է ներմուծել ստեղծագործական գնահատման (արժեքավորման) համակարգ, որը հենց ընթացքում կապահովի օգտակար ինֆորմացիա թե՛ դասախոսի, թե՛ ուսանողի համար: Այդ համակարգը կարող է ներառել (ա) արդյունքի գնահատում (եսսեներ, ստեղծագործական շարադրանքներ, հետազոտության հաշվետվություններ, նախագծեր և այլն), (բ) կատարման գնահատում (առաջադրանքների կատարումներ, գիտագործնական ցուցադրություններ, բանավեճեր, գիտական փորձեր և այլն), ինչպես նաև (գ) ընթացիկ գնահատումներ (բանավոր հարցումներ,

հարցախույզեր, դիտարկումներ և այլն): Եթե գնահատման չափանիշները հստակ ընկալվում են ուսանողների կողմից, նրանք ավելի հեշտորեն կարծեվորեն իրենց աշխատանքը և ավելի համոզված կլինեն արդյունքի ճշգրտության մեջ: Երբ ուսանողները մասնակցում են այն չափանիշների սահմանմանը, որոնցով գնահատվելու է աշխատանքը, իսկ այնուհետև նաև դերակատարություն ունեն իրենց կամ այլ ուսանողների աշխատանքի գնահատման գործում, նրանց սեփական պատասխանատվության զգացումը զգալիորեն ավելանում է:

Դասընթացի բովանդակությունը ուսանողների ուսումնական ակտիվությունը խթանելու տեսանկյունից կարող է բաշխվել երեք կարգերով՝ (ա) բովանդակություն, որի իմացությունը պահանջվում է բոլոր ուսանողներից, (բ) բովանդակություն, որը կարող է հասցեագրվել առանձին ուսանողների այս կամ այն խմբային նախագծի կամ աշխատանքի կատարման շրջանակներում և (գ) բովանդակություն, որը կարող է հետաքրքրել միայն ուսանողների, ովքեր ցանկանում են մասնագիտանալ այդ նեղ ոլորտում:

Այնուհետև պետք է որոշել, թե ո՞ր թեմաները ուսանողների ակտիվության և առաջադրանքների ո՞ր տեսակին են համապատասխանում: Որքանո՞վ դասընթացի թեմաները կողմնորոշված են ոչ միայն դեպի բովանդակություն, այլ նաև դեպի ուսումնառության ընթացք (վերը քննարկված առումով): Ինչպիսի՞ ուսումնական գործողություններ կարող են նպաստել ուսանողների ինքնուրույն և համատեղ աշխատանքին, օգնել տիրապետելու մասնագիտական գործիքակազմին: Ինչպե՞ս է ձևավորվելու դասընթացի խթանող և աջակցող մթնոլորտը՝ ուսանողների արդյունավետ աշխատանքը կազմակերպելու, միջանձնային և համագործակցային հմտություններ փոխանցելու և հետագա կրթության (այդ թվում նաև՝ ինքնակրթության) համար ունակություններ սերմանելու համար:

Այսպիսով, ուսանողամետ դասընթացի ծրագիրը կարող է ունենալ բազմաթիվ գործառույթներ, որոնք աջակցում և խթանում են ուսանողներին ակտիվորեն մասնակցելու դասընթացին.

ա) *հաստատել առաջին շփումը դասախոսի և ուսանողի միջև,*

ուստի նախընտրելի է, որ այն պարունակի առավել մանրամասն ինֆորմացիա դասախոսի մասին, նրա դասավանդման մոտեցումների, դասընթացը վարելու եղանակների մասին.

- բ) *ծառայել որպես ուսումնական նյութ և ձեռնարկ՝ ընդգրկելով դասավանդման նյութերը (handouts), մանրամասն ինֆորմացիա առաջադրանքների, դրանց գնահատման ձևերի վերաբերյալ.*
- գ) *նկարագրել ուսանողների կրթական վարքագծի վերաբերյալ պատկերացումները.*
- դ) *օժանդակել ուսանողներին գնահատելու իրենց պատրաստվածությունը դասընթացին մասնակցելու համար՝ ներկայացնելով այն, ինչ ուսանողն արդեն պետք է նախապես իմանա կամ կարողանա անել դասընթացին մասնակցելուց առաջ.*
- ե) *ցույց տալ դասընթացի տեղը ամբողջ ծրագրում և մասնագիտական ոլորտի շրջանակներում.*
- զ) *նկարագրել հասանելի ուսումնական ռեսուրսները.*
- է) *ներառել նյութեր, որոնք կարող են աջակցել արտալսարանային աշխատանքում.*
- ը) *ծառայել որպես դասախոսի և ուսանողների միջև համաձայնեցված ուսումնական պայմանագիր փոխադարձ պարտավորությունների վերաբերյալ:*

Բ. ՈՒՍԱՆՈՂԱՄԵՏ ԴԱՍԸՆԹԱՅԻ ԾՐԱԳՐԻ ԿԱԶՄՈՒՄԸ

Ընդհանուր առմամբ, ուսանողամետ դասընթացի ծրագրում պետք է արտացոլված լինեն հետևյալ կետերը.

- Դասընթացի նկարագրությունը, որը ներառում է դասընթացի նպատակներն ու խնդիրները,
- Դասընթացի կառուցվածքը և տեղը տվյալ կրթական ծրագրի շրջանակներում,
- Դասընթացի ընթացքում նախատեսվող ուսումնական գործողությունների տեսակները, ինչպես նաև ուսանողի և դասախոսի պատասխանատվությունների չափի սահմանումը,
- Դասընթացի՝ գնահատման և ստուգման չափանիշների պարզ, հասկանալի և հստակ սահմանումը:

Այդուհանդերձ, ուսանողամետ դասընթացի ծրագրի կառուցվածքը մեծապես կախված է դասընթացի տեսակից, բովանդակային տրամաբանությունից և ուսանողների պահանջներից, և այն կազմելու համար դասախոսը, պահպանելով մեթոդաբանական հիմնական պահանջները, պետք է ունենա պատշաճ ինքնավարություն: Ստորև բերվում են ուսանողամետ դասընթացի ծրագրի հիմնական ենթաբաժինները¹:

- Բովանդակություն
- Դասընթացը վարողի մասին տվյալներ
- Ուսանողների մասին տվյալներ
- Դասընթացի նպատակը
- Դասընթացի նկարագիրը
- Կրթական վերջնարդյունքները
- Գրականության ցանկը
- Դասընթացի օրացույցը
- Դասընթացի պահանջները
- Ստուգման և գնահատման եղանակները

1 Ավելի մանրամասն տե՛ս. ԵՊՅ կրթական ծրագրերի մշակման մեթոդական ուղենիշներ, Երևան, 2010, էջ 10-12:

Բովանդակություն

Ուսանողամետ դասընթացի ծրագիրը պետք է պատշաճ բովանդակային ծավալներ և հստակ կազմակերպված կառուցվածք ունենա, քանի որ ուսումնառության ընթացքում ուսանողները առնչվելու են ծրագրին փուլ առ փուլ (ըստ թեմաների) և պետք է հեշտ կարողանան գտնել համապատասխան թեմայի հետ կապված առաջադրանքները և պարտականությունները:

Դասընթացը վարողի մասին տվյալներ

Ուսանողամետ դասընթացի ծրագիրը պետք է պարունակի անհրաժեշտ տվյալներ դասընթացը վարողի մասին, որպեսզի ուսանողը դասախոսի հետ կապ հաստատելու հիմնական եղանակների և կարգի վերաբերյալ պատշաճ տեղեկատվություն ունենա:

Դասընթացի նկարագրի այս հատվածում դասախոսը կարող է համառոտ տեղեկատվություն ներկայացնել իր կրթական և հետազոտական փորձառության, ինչպես նաև մասնագիտական հետաքրքրությունների մասին:

Ուսանողների մասին տվյալներ

Փոխադարձ շփումը և հետադարձ կապը ապահովելու համար կարելի է ուսանողամետ դասընթացի ծրագրում ներառել համապատասխան մի հատված, որը հնարավորություն կտա հավաքագրել ուսանողների կոնտակտային տվյալները (անհատական տվյալներ, էլ. փոստի հասցե, հեռախոսահամար և այլն): Հնարավոր եղանակներից է՝ մշակել տվյալների հավաքագրման համապատասխան ձևաթուղթ և կցել այն դասընթացի ծրագրին. ուսանողը կկարողանա լրացնել և վերադարձնել այն հաջորդող դասախոսությունների ընթացքում:

Դասընթացի նպատակը

Ուսանողամետ դասընթացի ծրագրի այս հատվածում հար-

կավոր է բացատրել, թե ինչո՞վ է պայմանավորված տվյալ դասընթացի առկայությունը կրթական ծրագրում և ինչպե՞ս է այն լրացնում ընդհանուր կրթական ծրագիրը: Յտակ ներկայացնելով դասընթացի նպատակները՝ ուսանողին կարելի է ցույց տալ դասընթացի և իր ընդհանուր մասնագիտական աճի միջև սերտ կապը, ինչև, իր հերթին, կարող է խթանել ուսանողների առավել ակտիվությունը դասընթացի շրջանակներում:

Կրթական վերջնարդյունքները

Ուսանողամետ դասընթացի կառուցման հիմնական սկզբունքներից է կրթական վերջնարդյունքների հստակ ներկայացումը: Ուսանողին անհրաժեշտ է ցույց տալ այն կրթական վերջնարդյունքները, որոնց նա կհասնի դասընթացի ավարտին: Դասընթացի կրթական վերջնարդյունքները պետք է սահմանվեն հնարավորինս հստակ և չափելի՝ ձևակերպված լինելով ձեռքբերվելիք կոմպետենցիաների տերմիններով, այսինքն՝ նկարագրելով այն **կոնկրետ** գիտելիքները, ունակությունները և հմտությունները, որոնք պետք է կարողանա **դրսևորել** ուսանողը դասընթացի ավարտին: Այդ ձևակերպումները պետք է դասակարգել ըստ **տեսական գիտելիքների և գործնական կարողությունների** (բուն մասնագիտական և ընդհանրական)²:

Այդ իսկ պատճառով դասընթացի մակարդակում՝ ի տարբերություն կրթական ամբողջ ծրագրի, հարկավոր է խուսափել ընդհանուր արտահայտություններից (*կիմանա, կհասկանա, կժանոթանա*)՝ նախապատվությունը տալով *կդրսևորի [...-ը լուծելու, ներկայացնելու և այլն] կարողություն, կցուցաբերի [...-ը վերլուծելու, համադրելու և այլն] ունակություն* ձևակերպումներին:

Դասընթացի նկարագիրը

Ուսանողամետ դասընթացի ծրագրի այս բաժնում պետք է հնարավորինս հստակ նկարագրել դասընթացը՝ ներկայացնելով

2 Ավելի մանրամասն տե՛ս. ԵՊՅ կրթական ծրագրերի մշակման մեթոդական ուղենիշներ, Երևան, 2010, էջ 10-12:

դասընթացի բովանդակությունը, կազմակերպման ձևերը (դասախոսություններ, խմբային քննարկումներ, գործնական աշխատանքներ և այլն), ինչպես նաև դասավանդման մեթոդաբանությունը:

Գրականության ցանկ

Ուսանողամետ սկզբունքով կազմված դասընթացի համար կարևոր նախապայման է հանդիսանում անհրաժեշտ գրականության և լրացուցիչ աղբյուրներ որոնելու հնարավորությունների մատչելիությունը ուսանողի համար: Դասավանդողը պետք է համապատասխան գրականությունը հայթայթելու վերաբերյալ ուսանողին ապահովի անհրաժեշտ տեղեկատվությամբ (առկայությունը գրադարանում, ամբիոնում, վաճառքում և այլուր), իսկ հնարավորության դեպքում տրամադրի համապատասխան նյութերը և գրականությունը ուսանողներին: Գրականությունն ու ընթերցանության նյութերը պետք է դասակարգված լինեն ըստ ծրագրի բովանդակության մասում նշված համապատասխան թեմաների:

Դասընթացի օրացույց

Ուսանողներին մտահոգող ամենակարևոր հարցերից է՝ իմանալ, թե ե՞րբ և ի՞նչ է նրանցից պահանջվելու: Այս հարցերը պարզաբանելու համար ծրագրում բերվում է դասընթացների բաղադրիչների (թեմաների, սեմինարների, միջանկյալ և ավարտական քննությունների, գրավոր նյութերի հանձնման և այլն) ժամանակացույցը, որը պետք է ընդհանուր առմամբ համաձայնեցված լինի բուհում ուսումնական գործընթացի կազմակերպման կարգի հետ: Դասընթացի առաջադրանքների պլանավորումը պետք է լինի իրատեսական և հնարավորություն ընձեռի ուսանողին պատշաճ կատարել դրանք:

Դասընթացի պահանջները

Ուսանողամետ սկզբունքով դասընթաց կազմելու ընթացքում՝ դասընթացին վերաբերող պահանջները կարելի է տեղաբաշխել ծրագրի տարբեր բաժիններում, օրինակ՝ խնդիրներն ու նպատակները նկարագրող բաժիններում, ինչպես նաև գնահատման սկզբունքները նկարագրող մասում: Կարելի է նաև դասընթացի պահանջները ներկայացնել առանձին ենթաբաժնով:

Ստուգման և գնահատման եղանակները

Այս բաժնում անհրաժեշտ է հանգամանորեն նկարագրել գնահատման և ստուգման մեխանիզմները և գործիքները: Գնահատման և ստուգման գործիքները պետք է լինեն չափելի և զուրկ երկակի մեկնաբանությունից, ինչպես նաև երկակի կիրառման հնարավորությունից: Գնահատման գործիքները պետք է հասկանալի լինեն ուսանողի համար: Ուսանողը պետք է իմանա, թե ինչպե՛ս է գնահատվում իր աշխատանքը, ի՞նչ բաղադրիչներից է կազմված ավարտական միավորը և ինչպե՛ս և ի՞նչ գործիքներով է ստուգվում յուրաքանչյուր բաղադրիչ: Այս բաժնի նկարագրությունը նույնպես անհրաժեշտ է համաձայնեցնել բուհում գործող գիտելիքների գնահատման կարգի հետ:

Քանի որ գնահատման նոր համակարգում վերջնական միավորի մաս է կազմում ուսանողի մասնակցությունը ուսումնական պարապմունքներին (որը, սովորաբար, պատշաճ կերպով չի հստակեցվում գիտելիքի գնահատման բուհական կարգերում), ապա այդ մասնակցությանը դասախոսի կողմից ներկայացվող պահանջները պետք է մանրամասնորեն ներկայացվեն (օրինակ՝ ակտիվություն հարցերի տեսքով, մասնակցություն քննարկումներին, առաջադրանքների կատարում սահմանված ժամկետներում և այլն) և հստակ նշվի, թե ի՞նչ սկզբունքով է կատարվելու գնահատման այդ բաղադրիչի ձևավորումը:

Միջանկյալ կամ ընթացիկ քննությունների պարագայում անհրաժեշտ է նկարագրել ընթացակարգը, ստուգման և գնահատման մեխանիզմն ու գործիքները (օրինակ՝ թեստի պարագայում

պետք է նկարագրել նրա կառուցվածքը, տրամադրել նմուշօրինակը, ներկայացնել գնահատման չափանիշները և անցկացման ձևը: Եթե միջանկյալ կամ ընթացիկ քննությունը թեստի միջոցով չէ իրականացվում, այլ կազմված է տեսական հարցերից, ապա պետք է նշել դրանց քանակը, յուրաքանչյուր հարցի արժեքը և գնահատման սկզբունքը):

Գրավոր նյութի (էսսե, ռեֆերատ, կուրսային աշխատանք) պարագայում պետք է պարզ և հստակ նկարագրվել բոլոր այն չափանիշները, որոնցով առաջնորդվելու է դասախոսը տվյալ նյութը ստուգելու և գնահատելու ընթացքում:

**Գ. «ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԼՈՒ
ԲԱԼԻԶԱՑԻԱ. ԱՐԵՎՄՈՒՏՔ ԵՎ ԻՍԼԱՄ»
ԴԱՍԸՆԹԱՑ Ի ԾՐԱԳՐԻ ՆՄՈՒՇՕՐԻՆԱԿ**

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Դասընթացի ծրագիր

Ֆակուլտետ

Արևելագիտության

(ֆակուլտետի անվանումը)

Ամբիոն

Արաբագիտության

(ամբիոնի անվանումը)

Դասընթաց՝

**1802/M34, Մշակութային բազմազանություն
և գլոբալիզացիա. Արևմուտք և իսլամ**

*(Դասընթացի դասիչը և անվանումը՝
ըստ ուսումնական պլանի)*

Որակավորման
աստիճան՝

մագիստրոսի կրթական ծրագիր

Հեղինակ՝

Հայկ Քոչարյան, պ.գ.թ., ասիստենտ

*(ԱԱՀ, գիտական աստիճանը,
գիտական կոչումը, պաշտոնը)*

1. Դասընթացը վարողի մասին տվյալներ

Դասընթացը վարում է՝ պատմական գիտությունների թեկնածու, ասիստենտ Հայկ Քոչարյանը

Փոստային հասցեն՝ Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1, Երևանի պետական համալսարան, արևելագիտության ֆակուլտետ, արաբագիտության ամբիոն

Էլ. փոստի հասցեն՝ hkocharyan@ysu.am

Կայքը համացանցում՝ <http://yerevan.academia.edu/HaykKocharyan/>

Աշխատանքային հեռախոսները՝ 573330, 551674

Խորհրդատվությունների օրերը՝ երեքշաբթի և ուրբաթ, ժ. 13.00-14.00 կամ նախնական պայմանավորվածությամբ

Ակադեմիական կենսագրությունը՝ 2002-2005՝ ասպիրանտուրա, ԵՊՀ արաբագիտության ամբիոն, 20.11-10.12.2004՝ արաբերեն լեզվի դասընթացներ, Կահիրեի համալսարանի արաբերեն լեզվի կենտրոն, 2000-2002՝ մագիստրատուրա, ԵՊՀ արաբագիտության ամբիոն, 1998-1999՝ արաբերեն լեզվի ուսուցման ինստիտուտ, Դամասկոս, Սիրիա, 1995-2000՝ բակալավրիատ, ԵՊՀ արաբագիտության ամբիոն:

Աշխատանքային փորձը՝ 2005-ցայսօր՝ ԵՊՀ արաբագիտության ամբիոն, ասիստենտ, 2006-ցայսօր՝ ԵՊՀ Զաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն, ավագ փորձագետ:

Դասավանդվող այլ առարկաներ՝

